

ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ՎԱՐԿԵՐԻ ՏՐԱՎԱԴՐԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԲԱՐԵԼԱԿՄԱՆ ՀԻՄՆԱՅԱՐՑԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԻՒՄ

Ա. Ն. ՔԵՐԳԵՅԵԱՆ

Տնտեսագիտության թեկնածու, դրցենտ

Տ. Ռ. ԱՖՐԻԿԱՅԱՆ

ԳՊՀ մագիստրատուրայի ֆինանսներ բաժնի 1-ին կուրսի ուսանողուհի

Հայաստանի Հանրապետության մուտքը փոխատվական կապիտալի համաշխարհային շուկա օգալի չափով կապված է վարկային հարաբերությունների զարգացման և կայացման հետ: Հատկապես շուկայական տնտեսության պայմաններում հանրապետությունում մասնավորեցման գործընթացի ակտիվության հետ կապված, երբ կրծատվում կամ նվազագույնի են հասցվում բյուջեից ֆինանսավորման համար կատարվող դրամական միջոցները, ավելի տիրապետող են դառնում վարկային հարաբերությունները: Այդ պատճառով շուկայի ձևավորման հարցում պարտադիր պայման է դառնում դրամաշրջանառության և վարկային համակարգի արմատական վերակառուցումը: Բարեփոխման հիմնական խնդիրը դրամական ռեսուրսների կենտրոնացված վերաբաշխման առավելագույն կրծատումն է և անցումը ֆինանսական շուկայում դրամական միջոցների նպատակային շրջանառության: Ներկայումս Հայաստանի վարկային շուկայում մեծ պահանջարկ ունեցողն ու արագ զարգացող սպառողական վարկերի շուկան է:

ՀՀ առևտրային բանկերի մեծ մասը զբաղվում է սպառողական շուկայի վարկավորմաբ: Սպառողական վարկերը հատկացվում են տարբեր տեսակի ապրանքների և ծառայությունների ձեռքբերման համար (կենցաղային տեխնիկայի և այլ իրերի, կրթության, հանգստի և այլ ծառայությունների վարկավորում): Այս վարկատեսակը միտված է համենատարար կարծ ժամկետում բավարարելու սպառողական պահանջնունքները: Ուսումնասիրությունները վկայում են, որ կենցաղային ապրանքների ձեռքբերման նպատակով առաջարկվող վարկերից ամենացածր տոկոսադրույթը ունեն ավտովարկերը: Դրանց տոկոսադրույթը կազմում է 14-22 %: Զարկ է նշել, որ ավտովարկերի տոկոսադրույթը կախված է ինչպես մեքենայի մականիշից, այնպես էլ տարեթվից: Նման վարկերի համար բանկերի մեծամասնությունը պահանջում է առնվազն 50 % կանխավճար, իսկ դրանց ժամկետայնությունը երեք տարի է:

Ուսումնասիրությունները վկայում են, որ խիստ նվազել է սպառողական վարկերի ժամկետայնությունը: Առանձին դեպքում բանկերն առաջարկում են գումարներ՝ ընդամենը 3-6 ամսվա նարման ժամկետայնությամբ, իսկ միջին ժամկետը տատանվում է 1 տարվա սահմաններում: Ունենալով համենատարար բարձր պահանջարկ՝ չափազանց բարձր են սպառողական վարկերի տոկոսադրույթները: Դրանց տարեկան տոկոսադրույթը տատանվում է 20-30 %-ի սահմաններում:

ՀՀ բանկերի կողմից տրամադրվող սպառողական վարկերի ընդհանուր պորտֆելում գերակշռում են ոսկու գրավով տրվող և ապարիկ կարգով ապրանքներ ձեռք բերելու համար տրամադրվող վարկերը:

Սովորաբար սպառողական վարկը տրամադրվում է ներքին տնտեսությունում զբաղված քաղաքացիներին, և այն ուղղակիորեն կախված է ստացվող եկամուտների մակարդակից: Չնայած բարձր տոկոսադրույթին՝ սպառողական վարկերի ծավալն անընդհատ աճում է, ինչը բացատրվում է մարդկանց՝ բարեկեցիկ ապրելու ցանկությամբ և պայմանավորված է բնակչության վճարունակության բարձրացմամբ: Այս կամ այն ապրանքի ծեռքբերման համար շատ քաղաքացիներ միանգամից վճարելու հնարավորություններ չունենալով՝ գերադասում են օգտվել բանկերի ծառայություններից՝ հույս ունենալով, որ սահմանված ժամկետում կկարողանան մարել այդ գումարը:


Ուսումնասիրությունները վկայում են, որ 2008-2012թ.-ին Հայաստանի Հանրապետությունում բանկերի կողմից իրականացված վարկային ներդրումներում 2008թ.-ին տրամադրվել է 6612382 մլն դրամ արժեքով վարկ, որից՝ 1881605 մլն (28.46%) կազմել են սպառողական վարկերը, իսկ 2009թ.-ին 8020652 մլն դրամի չափով տրամադրված վարկերի 21.68%-ը կազմել են սպառողական վարկերը (1738810 մլն դրամ): 2010թ.-ին նույն ցուցանիշները կազմել են 9087314 մլն դրամ, ընդ որում՝ սպառողական վարկերը կազմել են 1756864 մլն դրամ կամ վարկերի ընդհանուր ծավալի 19.33%-ը:

Հարկ է նշել, որ համաշխարհային տնտեսական ճգնաժամից առաջ որոշ բանկեր սպառողական վարկեր տրամադրում էին մինչև 14 %-ով: Դա բացատրվում է նրանով, որ բնակչության մեծամասնությունը գտնվում էր սոցիալապես համեմատաբար բարեկեցիկ վիճակում: Մինչդեռ ճգնաժամային երկու տարիների ընթացքում նվազել էին բնակչության եկամուտները, իսկ սպառողական վարկերի տոկոսադրույթները՝ բարձրացել: Վերլուծությունները ցույց են տալիս, որ 2009 թ.-ին ֆիզիկական անձանց տրամադրվող վարկերի ծավալի աճը զգալիորեն զիջում է տնտեսության վարկավորման ծավալների աճին: Վերջինս պայմանավորված էր ֆինանսատնտեսական ճգնաժամով, որի պայմաններում բանկերն առավել զգուշավոր էին սպառողական ու հիփոթեքային վարկավորման հարցերում: 2009թ.-ի առաջին եռամսյակից բանկերը նվազեցրել էին հիփոթեքային ու սպառողական վարկերի տրամադրումը: Արդյունում վերոնշյալ հանգամանքները հանգեցրին դրանց պահանջարկի կտրուկ կրծատմանը: Ուսումնասիրությունները վկայում են, որ ֆիզիկական անձանց վարկավորման ծավալի աճ է նկատվել միայն 2009թ.-ի չորրորդ եռամսյակից: Հատկապես 2011թ.-ի առաջին եռամսյակից սկսած՝ կտրուկ աճել է թե՛ բանկային համակարգի կողմից վարկային ներդրումների և թե՛ դրա բաղկացուցիչ մաս կազմող սպառողական վարկերի ծավալը: Այսպես, 31.12.2011թ.-ի դրությամբ ՀՀ Կենտրոնական բանկի կողմից հրապարակած ամփոփ տվյալների համաձայն՝ 2011թ.-ին տրամադրվել է 21814185 մլն դրամի վարկ, որի 10.42%-ը (2273502 մլն դրամ) կազմել են սպառողական վարկերը: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ 2011թ.-ի չորրորդ եռամսյակը բնորոշվում է վարկերի նկատմամբ պահանջարկի մեծացմամբ, հատկապես ակցիաներով, վարկային պայմանների դյուրացումներով և վարկավորմանը կից մատուցվող նոր ծառայություններով, որոնք նպատակ են ունեցել արագացնելու և հեշտացնելու հաճախորդների համար սպառողական վարկավորման գործընթացը: Նշենք, որ սպառողական վարկեր տրամադրելիս նվազել է վարկավորման տոկոսադրույթը, ոչ տոկոսային վճարների գանձումը և վար-

կարժանության ուսումնասիրության պայմանները դարձել են ոյուրին: Պետք է նշել, որ հաճախորդների վարկարժանության տեղում ներդրվել է զնահատման համակարգ, որը կրծատել է վարկավորման թղթատարությունը և ժամանակատարությունը: Որոշ բարելավումներ են կատարվել նաև սպառողական վարկերի դիմաց գրավ հանդիսացող գույքի պահանջի և գրավ-վարկ հարաբերակցության պայմաններում: Այս վարկատեսակի գծով նկատելի է բանկերի և վարկային կազմակերպությունների միջև ծավալված մրցակցության գործոնի ազդեցությունը պայմանների վերանայման վրա: Համանան օրինաչափություն է նկատվում նաև 2012թ.-ին: Ընդ որում՝ տրամադրված վարկերի ընդհանուր ծավալի 17.91%-ը կազմել են բնակչությանը տրամադրված սպառողական վարկերը:

ՀՀ բանկերի կողմից 2008-2012թթ.-ին տրամադրված սպառողական վարկերի շարժի դիմամիկան (ըստ եռամսյակների) ներկայացված է գծապատկեր 1 -ում:


Գծապատկեր 1
2008-2012 թթ.-ին տրամադրված սպառողական վարկերի ծավալներն
ըստ եռամսյակների (մլն դրամ)



Վերլուծությունները վկայում են, որ 2008թ.-ի համեմատությամբ 2009թ.-ին տրամադրված սպառողական վարկերի ծավալը նվազել է 7.5%-ով: 2010թ.-ին սպառողական վարկերի ծավալը 2009թ.-ի նկատմամբ աճել է 1%-ով, 2011թ.-ին, 2010թ.-ի համեմատությամբ՝ 29%-ով, իսկ 2012թ.-ին, 2011թ.-ի համեմատությամբ՝ 37,27%-ով:


Ուսումնասիրությունները վկայում են, որ 2008-2012թթ.-ին սպառողական վարկերի գծով վարկային պահանջարկի ամենաբարձր մակարդակը գրանցվել է 2012թ. չորրորդ եռամսյակում (գծ.2.3): Ընդ որում՝ բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից բավարարվել է չորրորդ եռամսյակի ընդհանուր վարկային պահանջարկի 94.3 %-ը: Մեծաբանակ մերժումներ են եղել հիփոթեքային վարկերի գծով՝ բավարարելով պահանջարկի 70.1 %-ը: Խոշոր բիզնես վարկերի գծով բավարարվել է պահանջարկի 86%-ը, ՓՄՁ-ներին տրամադրված վարկերի գծով՝ 87%-ը, որը հիմնականում բացատրվում է վարկառուների վարկունակության ցածր մակարդակով: Համեմատաբար քիչ մերժումներ են եղել սպառողական վարկերի գծով, որը կազմել է 5%, իսկ մերժված վարկային դիմումների տեսակարար կշիռը կազմել է 3.9%:

Գծապատկեր 2
**ՀՅ առևտրային բանկերի կողմից բնակչության ներկայացրած
 վարկային պահանջարկի բավարարման մակարդակը
 2012թ.-ի չորրորդ եռամսյակում**



Գծապատկեր 3

ՀՀ առևտրային բանկերի կողմից բնակչության ներկայացրած
վարկային հայտերի բավարարման մակարդակը
2012թ.-ի չորրորդ եռամսյակում




ՀՀ բանկային համակարգում կատարված հարցումները վկայում են, որ դիտարկվող ժամանակահատվածում վարկային ռիսկերը (գծ.4) տեղաբաշխված են հետևյալ հարաբերակցությամբ.

- գրավի արժեզրկման ռիսկ - 33%,
- ՀՀ դրամով իրացվելիության ռիսկ - 31%,
- գնաճի ռիսկ - 27%,
- օրենսդրական ռիսկ - 9%.

Գծապատկեր 4

ՀՀ առևտրային բանկերի կողմից սպառողական վարկերի
տրամադրման հետ կապված ռիսկերը 2008-2012թթ. -ին (%)



Սպառողական վարկերի պահանջարկի աճին նպաստող գործոններ են հանդիսանում երկարաժամկետ սպառնան ապրանքների ձեռքբերմանն ուղղված ծախսերի ավելացումը և սպառողների վստահության մեծացումը: Ազնիայտ է, որ արտոնյալ պայմանների դեպքում սպառողական վարկերի ձեռքբերման առաջանցիկ աճի տեսայթ բավականին մեծ կլինի: Առևտրային բանկերի շահույթների ձևավորման գործում մեծ տեսակարար կշիռ ունեն սպառողական վարկերը: Դրանք խթանում են ոչ միայն տնտեսության զարգացմանը, այլև նպաստում են սպառողական պահանջարկի ավելացմանը, իսկ առևտրի աշխուժացման դեպքում որոշակիորեն լուծվում է նաև հարկերի հավաքագրման խնդիրը: Վարկային պյուտֆելի ձևավորման ընթացքում կարևորվում է դիվերսիֆիկացման հիմնախնդիրը: Բանկն իր վարկային գործունեությունը պլանավորելիս պետք է ընտրի այնպիսի ռազմավարություն, որ կախում չունենա տնտեսության որևէ ճյուղից, մեկ վարկառությունը, իսկ ֆիզիկական անձանց վարկավորելիս պետք է դրսևորի առավել զգուշավորություն:

Հարկ է նշել, որ սպառողական վարկերը տրամադրվում են համեմատաբար փոքր գումարներով, ինչը թույլ է տալիս դիվերսիֆիկացնելու վարկի չվերադարձման ռիսկը, քանզի վարկերը ոչ միշտ են ապահովված լինում գրավով (վարկավորման գործառնությունների ընթացքում հաշվի են առնվում վարկառություն վարկային պատմությունը և ընթացիկ եկանութները, որոնք կարող են չկրել նշտական բնույթը):

Այսպիսով, ՀՀ-ում առևտրային բանկերի կողմից սպառողական վարկերի տրամադրման գործընթացը բարելավելու նպատակով անհրաժեշտ է.

- սպառողական վարկավորման գործառնությունները իրականացնելիս վերանայել վարկավորման տոկոսադրույքները՝ սահմանելով որոշակի արտոնություններ, ինչը ֆիզիկական անձանց հնարավորություն կընձեռի հաճախակի օգտվել բանկի վարկային ծառայություններից՝ անուղղակիորեն խթանելով տնտեսության իրական հատվածի զարգացմանը,

- զանգվածային լրատվական ու վարկային գործարքներին վերաբերող տեղեկատվական հրապարակումների միջոցներով բարձրացնել բնակչության իրազեկության աստիճանը՝ կանխելով ապատեղեկատվության տարածումը նշանակած ոլորտի վերաբերյալ,

- բարելավել բանկերի սպասարկող անձնակազմի կողմից վարկառուներին տրվող խորհրդատվությունների և ծառայությունների մասուցման որակը, որը կբարձրացնի ոչ միայն տվյալ բանկի վարկանիշը, այլև հասարակության շրջանում կմեծացնի բնակչության վստահությունը բանկերի նկատմամբ,

- կատարելագործել պլաստիկ քարտերով սպառողական վարկերի տրամադրումը, որը կիսրանի անկանխիկ դրամաշրջանառության ակտիվացմանը,

- հաշվի առնելով ֆինանսական շուկայի այլ հատվածների ու իրական հատվածի բարեփոխումների հետևանքներն ու պահանջները՝ վերանայել բանկային համակարգի կարգավորման ու վերահսկողության հայեցակարգը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Անդրեասյան Ա.**, «Վարկային գործառնություններ», Երևան, 2003:

2. Ասատրյան Բ., «Բանկային գործ», ուսումնական ձեռնարկ, Երևան, 2004:
3. Բաղդանյան Լ. Դ., «Ֆինանսներ և վարկ», ուսումնական ձեռնարկ, Երևան, 2003:
4. Կիրակոսյան Գ. Ե., Ղուզյան Յ. Բ., Տհօրանյան Յ. Կ., «Տնտեսագիտական բացատրական բառարան», Երևան, 1999:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՅԱՍԱԽԱՅԱՅԻՆ ԿԱՅՔԵՐ

www.armstat.am
www.banks.am
www.credit.am
www.cba.am
www.Arminfo.am
www.e-library.Uba.am

ПРОБЛЕМЫ УСОВЕРШЕНСТВОВАНИЯ ПРОЦЕССА ВЫДЕЛЕНИЯ ПОТРЕБИТЕЛЬСКИХ КРЕДИТОВ КОММЕРЧЕСКИМИ БАНКАМИ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

**M. N. ЕРГНЯН
T. R. АФРИКЯН**

В условиях рыночной экономики придается значимость роли потребительского кредита как одного из вида кредитования, имеющий большой спрос со стороны населения. Рассмотрев риски и препятствия, связанные с потребительским кредитованием, в работе предложены пути усовершенствования предоставления потребительских кредитов коммерческими банками РА.

THE IMPROVEMENT ISSUES OF MERCHANT BANKS' CONSUMER CREDITS IN THE REPUBLIC OF ARMENIA

**M. N. HERGNYAN
T. R. AFRIKYAN**

The role of consumer credits is highlighted in conditions of market economy as a kind of credit which is much in demand and develops intensively. The ways of improving the process of lending consumer credits by merchant banks in the Republic of Armenia is elucidated in the article at the same time paying attention to the risks and obstacles concerning consumer credits.